

# ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկեիչի

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

(Շարունակութիւն՝<sup>1)</sup>)

30 տուլիսի.

Երկու շաբաթ կը լինի, ինչ յիշառակարանիս երեսը չեմ նա-  
յել: Կրոմիցկու հետ դործով Վիեննա դնացինք, յետոյ նա էլի երեք  
օր մնաց Գ.սշտէնում, իսկ դրանից յետոյ գլուխս այնպէս սաստիկ  
ցաւում էր, որ անկարող էի գրիչ ձեռք վեր առնել: Պանի Յելի-  
նայի թժկութիւնը վերջացել է սրանից մօտ երկու շաբաթ առաջ,  
բայց մենք դեռ մնում ենք այսաեղ, որովհետեւ ներքեւում՝ դաշտա-  
վայում այրող շոքեր են անում: Կրոմիցկու դնալը մեծ թեթևու-  
թիւն պատճառեց ինձ, պանի Յելինային (եթէ նա պանի Յելինայի  
փեսան չլինէր, վերջինս նրան տանել չէր կարող), հօրաքրոջն և  
գուցէ և Անելիկային: Անելիկան չի կարողանում նրան ներել, որ նա  
ինձ խառնեց իւր գործերի մէջ, իսկ Կրոմիցկին, որ ամենեին չի  
գուշակում, թէ իմ ու իւր կնոջ մէջ, բացի սովորական ազգակա-  
նական յարաբերութիւններից, կարող է և մի ուրիշ բան լինել  
իւր փոխառութիւնը գաղտնիք չի պահում: Դժւար է ասել, թէ

<sup>1)</sup> Տես «Մուլք» 1892 թ. №№ 1—12, 1893 թ. № 1, 2, 6 և 7—8:

որքան զգւելի է այս փոխառութիւնը Անելկայի համար, բայց այդ ուղղակի կրոմիցկու երեսին ասել նա չէր համարձակում կրոմիցկին դրանից յետոյ էլ կարող էր թողնել նրան հօրաքրոջս մօտ, իսկ այդ կը չնջէր Անելկայի սրտից մոլորութեան վերջին նշոյլը, որով նա ինքն իրան խարում է: Մէկ-մէկ մովովս անցնում է, որ թէ Անելկան և թէ պանի Յելինան առանց իրար լոյս ընկնելու, նրան մի մազաչափ անգամ չեն հաւատում Գլուխովը ծախելուց յետոյ, և իրանց սրտի խորքում նրան աւելի վատ են համարում, քան նա իրօք է: Իմ կարծիքով նախ և առաջ կրոմիցկին իւր հոգով ու սրտով մի տեսակ նորելուկ է չոր ու ցամաք բնաւորութեամբ, որ անընդունակ է նուրբ բաներ հասկանալու: Նրա հոգին զուրկ է բոլորովին մեծահոգութիւնից ու դիւրազգացութիւնից, բայց բառիս սովորական հասարակօրէն ընդունւած նշանակութեամբ նա այնու ամենայնիւ կարգին մարդ է: Այդ բանում նրան օգնում է բնածին պեղանոռութիւնը, որ նրա մէջ տարօրինակ կերպով միացած է դրամական նեւրոզի հետ, իսկ նրա նեւրոզը ոչ այլ ինչ է, եթէ ոչ խանգարւած երեւակայութիւն, որ այդ ձեւն է ընդունել նրա մէջ:

Ընդհանրապէս ասած նա ինձ այն աստիճան անսունելի ու ատելի է իւր մոնոկով, շիլ աչքերով, երկար ոտներով և դեղին ու անմազ երեսով, որ զարմանում եմ, թէ ինչպէս եմ կարողանում նրա մասին օբեկտիւ կերպով դատել:

Եթէ նա իւր բոլոր ունեցած-չունեցածը չկորցնի, իմ փողերս էլ չեն կորչի: Բայց չեմ ծածկում, որ աւելի կը գերադասէի, որ նա կորցնէր թէ փող, թէ խելք, թէ կեանք և միանգամ ընդ միշտ չքանար:

Ես հիւանդ եմ: Անելկային վերջին օրերը սակաւ եմ տեսնում: Ինձ վերեւում պահողը մասամբ զլիացաւ էր, մասամբ էլ դիտմամբ չէի ուզում նրան պատահեմ, որ նրան զգացնել տամ, թէ ինչքան բարկացած եմ իրա վրայ ու վիրաւորւած իրանից: Իսկ այդ ինձ վրայ արժան չէր նստում, որովհետեւ նա իմ աչքերիս համար նոյնքան անհրաժեշտ է, որքան ցերեկւայ լոյսը: Արդէն գրել եմ, որ չնայելով իւր անցողողդ բնաւորութեան, նա երկչոս է: Նա ուղղակի չի կարողանում տանել, երբ մէկը իւր վրայ բարկացնում է, վախենում է այդ բանից և աշխատում է շահել բարկացողի սիրու:

Այդ ժամանակ նա քաղցրանում ու հեղանում է ու այնպէս է նա-  
յում մարդու աչքերին, ինչպէս պատժից վախեցող երեխար:

Այդ ինձ միշտ սաստիկ յուգել է, բայց միեւնոք ժամանակ և  
մեծ բաւականութիւն պատճառել. ինքս ինձ խաբում էի այն են-  
թաղրութեամբ, որ հէնց որ գիրկս բաց անեմ, նա խսկոյն կընկնի  
գիրկս և գլուխը կը խօնարհեցնի կրծքիս թէկուզ նրա համար, որ  
մեղմացնի բարկութիւնս Զեմ կարողանում թողնել այդ մոլորու-  
թիւնները, և թէկ զիտեմ, որ ապազան նրանց անշուշտ ցիր ու-  
ցան կանի, էլի սրտիս խորքում մնում է մի յոյս, որ երբ մենք  
հաշտենք, դրանից մի բան դուրս կը դայ, — նս ինձ որ և է զի-  
ջում կանի ու աւելի կը մօտենաց ինձ: Միւս կողմից այդ փոխա-  
գարձ անբաւականութեան մէջ տեսնում եմ Անելկայի կարծես թէ  
մի տեսակ ականայ խոստովանութիւնը, թէ ևս իրաւոնք ունեմ  
իրան սիրելու: Եթէ նա ընդունում է սիրուց յառաջացած վիրա-  
ւորանքը, ուրեմն պէտք է ընդունի և նոյն ինքը սէրը: Ասենք այդ  
իրաւոնքները անըմբանելի են, ինչպէս երազ, չունեն ոչ մարմին,  
ոչ արիւն, բայց ևս դրանցով եմ պատսպարում լիակատար անդ-  
դացութեան դէմ, դրանցով եմ ապրում:

## 2 օգոստոսի.

Կարձեալ Կլարայից նամակ ստացայ: Զլինի նա մի բան է  
կասկածում: Այնքան քնքութիւն կայ նրա նամակի մէջ, այնքան  
կարեկցութիւն կաց նրա խօսքերի մէջ, որ կարծես թէ նրան յատնի  
լինի, թէ ինչ աստիճան վատ է զրութիւնս: Զգիտեմ և չեմ էլ  
ուզում իմանալ, արդեօք սիրում է նա ինձ իրեւ քոյր թէ ուրիշ  
կերպ, բայց զգում եմ, որ նա սիրում է ինձ սաստիկ: Պատսախա-  
նեցի նրան այնքան սրտանց, որքան կարող է սրտանց պատսախա-  
նել անբախտ մարդք իւր միակ կարեկից բարեկամին նամակ դրելիս:  
Կլարան ուզում է գալ Բերլին, իսկ ձմեռաւ սկզբին Վարշաւա:  
Ինձ էլ յորդորում է, որ Բերլին գնամ, գննէ երկու օրով: Ես չեմ  
գնայ, որովհեաւ: չեմ կարող անջատել այն բանից, որ տանջում է  
ինձ, բայց ուրախ կը լինեմ տեսնել նրան Վարշաւայում:

Անելկայի հետ խօսում ենք միայն ընթացիկ գործերի մասին,  
որ հօրաքրոջս ու պանի Յելինայի ուշադրութիւնը չդարձնենք մեր

մէջ ծագած սառնութեան վրայ: Երբ միայն ենք լինում, ըստում ենք. նկատեցի, որ նա մի քանի անգամ ուզում էր հետո խօսել, բայց երկշոտութիւնից բերանը չէր բացւում, իսկ ես միայն մի խօսք կարող եմ ասել՝ սիրում եմ, բայց այդ խօսքը այնքան թուլ է արտայայտում իմ զգացածը, որ արժի նրան զործ ածել: Այժմ սէրիս հետ խառնել է և որոշ աստիճան դառնութիւն: Խնձ մաշում է այն միաքը, որ Աստուած նրան նեղ սիրտ է տւել և հէնց այդ է նրա անցողողդ լինելու բուն պատճառը: Այսօր աւելի հանգիստ եմ մասածում ամեն բանի մասին և էլի գալիս եմ այն համոզման, որ Անելիան դէպի ինձ պէտք է զգալիս լինի մի բան, որ բազկացած է շնորհակալութիւնից, անցեալի լիշողութիւնից. բայց այդ զգացմունքի մէջ չկայ զործունեաց ոչժ, նա ոչ մի վճռողական բան չի կարող անել, անկարող է անգամ խօսապիտանել իւր դոյութիւնը: Այդ զգացմունքը չունի յարդանք դէպի ինքը, ինքն իրան չարիք է համարում, ինքն իրանից ամաշում է, ծածկում է, և իմ զգացմունքի համեմատութեամբ երկում է իրեւ մանանեխի մի հատիկ Ալպեան լեռների զիմաց, որ այժմ շրջապատում են մեզ: Անելիայից կարելի է սպասել, որ նա աւելի շուտ ամեն բան կանի սահմանափակելու քան թէ զարգացնելու համար այդ զգացմունքը: Ես ոչ սպասում եմ նրանից մի բան ստանալու և ոչ էլ յոյս ունեմթէ կը ստանամ, և ինչքան անտանելի է դարձնում դրութեան այդ համոզումը:

## 4 օգտառոսի:

**Մի** ժամանակ սրուիս խորըում յոյս էի տածում, որ Անելիան մարդու վրայ ունեցած զայրութի ազդեցութեան տակ կը զայ ինձ մօտ ու կասի. Ե՞ուր իմ փոխարէն վճարել ես... ահա եսու: Նոր յուսախարութիւն: Կարելի է այդպէս վարեկն տաք-զլուխ կանացք, որ անւած են ֆրանսիական ուղաններով, այդպէս կը վարեկը անշուշտ ամեն կին, որ դադանի ցանկութիւն ունի ընկնելու սիրեկանի զիրկը և միայն յարմար ասիթի է սպասում: Զէ, Անելիան այդ բանը չի անի. մինչդեռ ես մնել եմ կեղծ դրամաների լնթերցանութեամբ, դրամաների, որոնք կատարւում են այն կանանց սրտում, որոնք ստից մինչև գլուխ լիքն են իրանց պատիւը քամուն տալու ցան-

կութեամբ։ Անելկային կարող էր իմ դիրկը զցել միայն սիրով, բայց ոչ շինծու դրաման, ոչ ֆրազները. ոչ, կեզծ յուզմունքները այդ են կարող անել։ Անկարելի բանէ, որ այդպէս պատահի:

Մեծ անբախտութիւն է անկեղծ ու խորը ուրիշի կնոջ սիրել, թէկուզ լինի նա ամենահասարակ, ամենաողորմելի մարդու կին, բայց առաքինի կնոջ սիրելուց աւելի մեծ դժբախտութիւն չկայ։ Իմ և Անելկայի յարաբերութիւնների մէջ կայ մի բան, որի մասին ես երբէք ոչ լսել եմ և ոչ կարդացել, այդ՝ որ և է ելքի, որ և է վախճանի անհարութիւնն է։ Որ և է վախճանը—լինի նա աղէտալի վախճան թէ մարդկային իղձերի պսակումն—էլի մի բան է, իսկ այժմ մի սարսափելի կախարդւած շրջան է միայն։ Եթէ նա մնայ այնպէս, ինչպէս որ է, իսկ ես չդադարեմ նրան սիրելուց, դրա հետևանքը կը լինի միայն տանջանք և տանջանք—և ուրիշ ոչինչ։ Իսկ ես յուսահատ կերպով համոզւած եմ, որ նա մինչեւ վերջը կը տանի—ես էլ նոյնպէս։

Նրա համար, եթէ յիրաւի նս փոքր սրտի տէր է, այդ ծանր չի լինի։ Նատ անգամ եմ ուզել դէն դցել վրայիցս այդ լուծը, բայց չեմ կարողանում։ Նատ անգամ եմ ինձ ու ինձ կրկնել, թէ այդ հարկաւոր է, շատ անգամ եմ ճիգ գործ դրել, ինչպէս խեղդող մարդը գործ է դնում ազատելու համար, շատ անգամ է ինձ թւացել, թէ հասել եմ մի հետևանքի, բայց բաւական է եղել նրան լուսամուտից տեսնեմ, աշքերովս ընդգրկեմ, որ այնպէս յուզումն զգամ, որից իսկոյն զգացմունքիս ամբողջ անտեսանելի խորութիւնը բացւում է աչքերիս առաջ, ինչպէս որ դիշերը որոտի ժամանակ կայծակը պատառուսում է խաւարը։

Օ՛հ, ինչ մեծ տանջանք է, երբ մարդ գործ է ունենում սառը ու անողոք առաքինութեան հետ, ինչպէս օրէնքի տառը։

Բայց էթէ Անելկան բոլորովին անսիրութիւնէր, ես էլի կը սիրէի նրան, ինչպէս կը սիրէի իմ մին ու ճար երեխային, եթէ նա հրէշ լինէր անգամ։

Այդպիսի դէպքերում մարդ աւելի է գութ ունենում և աւելի է տանջում։

## 5 օգոստոսի.

Ինչ անպէտք ու ողորմելի չափս է խելքը, երբ հարկէ լինում՝ նրանով չափել կամ շատ մեծ, կամ հանճարեղ և կամ ահռելի բաներ: Խելքը, որ այնքան լաւ ծառայում է կեանքի սովորական պայմաններում, այդ ժամանակ Պոլոնիոսի պէս ծերացած միմու է դառնում: Ինձ թշում է, որ շինական բարոյագիտութիւնը հաւասար կերպով չի կարող ծառայել իբրև չափս բարձր զգացմունքների համար: Տեսնել այդպիսի բացառիկ, այդպիսի անհուն զգացմունքի մէջ, ինչպէս որ իմս է, միան այս ինչ ու այն ինչ յօդւածների խախտումն և ուրիշ ոչինչ, չտեսնել, որ այդ մի ոյժ է, մի մասը այն մեծ ոյժի, որ բարձր է բոլոր մանր-մունր պատահիրաններից, այն ասուածային, ստեղծագործող ու անեզր ոյժի, որի վրայ է հիմնած ամեն բան, ինչ որ գոյութիւն ունի, չտեսնել այդ բոլորը՝ մի տեսակ կուրութեան ու ոչնչութեան նշան է... Աւաղ, Անելկան հէսց այդ աչքով է կարողանում նայել իմ սէրիս վրայ: Կարծում եմ, որ նա երեխ ինքն իրան մոտածելիս կը լինի, թէ ինչ կուզի լինի, ես զրահամար պէտք է իրան յարդեմ, մինչդեռ Աստծուն յայտնի է, որ այս նրա համար չեմասում, որ գործը ինձ է վերաբերում, այլ գործի վրայ ամենաօրինական կերպով նայելուց յեղոյն էլ, ստիպւած եմ լինում ի բաց վանել ինձնից դէպի Անելկան զգացած արհամարհանքս ու սրտիս խորքում ասել նրան: «Մի ուրիշ չափս վերցրու, - ունեցածդքեզ վայել չէ»: Ես նրան կը յարդէի ու կը պատուէի հարիւր անզամ աւելի, եթէ որ նա կարողանար ուրիշ աչքով նայել եթէ ոչ մեր յարաբերութեան, գոնէ ընդհանրապէս սիրոյ վրայ:

## 6 օգոստոսի.

Սակայն Գաշտէնը լաւ վերականգնում է մարդու: Այսօր նկատեցի, որ այսուեղ, լեռնային օդում, Անելկայի երեսի գոյնը կարմրել ու այրել է և նա առողջ է երեւու: Այդ զարմանալի է, մանաւանդ որ նա էլ քիչ հոգաեր ու նեղութիւններ չի քաշել: Մարդու հեռունեցած անհամաձայնութիւնը նրան մաշում էր. նա իւր պատին չէր կարողանում կերցնել, որ մարդը ինձ դրամական զործերի մէջ խառնեց. իմ սէրը նոյնպէս խանդարում է նրա հոգու ներդաշնակութիւնը ու վրդովում է նրա խաղաղութիւնը: Զնայելով այդ բո-

լորին, նրա քննքուշիկ երեսը փալլում՝ և առողջութեամբ և թշերը վարդ են կարել: Ցիշում եմ, ՚ինչպէս ամառւայ սկզբին իմ աչքերիս առաջ նաև հալ ու մաշ էր լինում, յիշում եմ, ինչպէս մազերս փշաքաղւում էին, երբ մոտածում էի, որ նրա առողջութիւնը, գուցէ և կեանքը վտանգի մէջ է, այժմ դոնէ այդ երկիւղը անցել պըրծել է: Եթէ ես իմանալի, որ ապագայում նա աւելի քիչ կը ցաւի ինձ վրայ, աւելի քիչ ուշադրութեան կառնի թէ ինձ ու թէ իմ զգացմունքը, բայց դրա փոխարէն առողջ կը լինի, այն ժամանակ կասէի նրան. «Թող ինձ բանի աեղ չղի, թող չխղճալ ինձ, միայն թէ ինքը առողջ լինի»: Անկեղծ սէրը բաղկացած է ինչպէս երջանիկ լինելու փափաղից, նոյնպէս և ցաւակցութիւնից, հոգացողութիւնից:

Երէկ Անելիան հազել էր իւր աղջիկ ժամանակւայ շորերից մէկը, ես այդ նկատեղի, և մեր ամբողջ անցեալը կենդանի կերպով պատկերացաւ աչքերիս առաջ: Միացն Աստծուն է յացտնի, թէ ինչ էր զգում սիրու:

7 օգոստոսի.

Հօրաքրոջս բարկութիւնը Անելիայի վրայ վաղուց անցել է: Նա Անելիային այնքան սիրում է, որ իմ մահից յետոյ էլ կեսնքի մէջ մի կասւելու բան կունենաց, եթէ Անելիան նրա մօտ մնայ: Այսօր նա շատ դարդ էր անում, որ Անելիայի սիրու սկի չի բացւում, մինչև վերջը տանը նստած է և այստեղ ոչինչ չի տեսել, բացի Վիլդբադից Հոֆգաշտէյն տանող ճանապարհից:

Եթէ ոտներումն ոյժ լինէր,—ասաց հօրաքոյրս,—ես քեզ ամեն տեղ կը տանէի ման կածէի, բայց այդ քո մարդի պարտականութիւնն էր քեզ այստեղի շրջակացքը ցոյց տալ,—առանց այն էլ նա առաւատից մինչև երեկոյ այստեղից այնտեղ էր վազվզում:

Անելիան սկսեց հաւատացնել, որ տանն էլ շատ լաւ է և որ ինքը կարիք չի զգում ուրիշ տեղ գնալու: Այդ որ լսեցի, ասացի անտարբեր տոնով.

Սա ոչ մի զործ չունեմ, միշտ մանեմ դալիս, այնպէս որ կարող եմ Անելիային ամեն տեղ տանել ման ածել և դոնէ մօտերքումն ինչքան հետաքրքիր բան կայ՝ ցոյց տալ:

Մի քիչ անցնելուց յետոյ աւելացրի աւելի ևս անտարբեր կերպով.

—Դրանում սովորութեան դէմ ոչինչ չեմ տեսնում: Հանքային ջրերում մինչև անգամ ծանօթները միմեանց հետ ամեն տեղ գնում են, ուր մնաց ազգականները:

Անելիան ոչինչ չպատասխանեց, բայց պառաւ տիկինները երկուսն էլ ասածիս հաւանեցին, մանաւանդ որ իսկաղէս ասած ճշմարտութեան դէմ չէր:

Վաղը մենք պէտք է միասին Նրէկրբիւկէ գնանք:

#### 8 օգոստոսի.

Մեր մէջ զաշնադրութիւնը հաստառած է և այսօրւանից մեզ համար նոր կեանք պէտք է սկսի: Այդ բոլորը այն ձեւը չունի, ինչպէս ես էի երեկակացում, բայց իմ ապագան պէտք է ամփոփուի նրա մէջ: Այսօրւանից ամեն բան կը լինի պարզ ու որոշ: Նոր ոչինչ չի լինի, յոյն դնել ոչ մի բանի վրայ չեմ կարող, բայց դրա փոխարէն և անապաստան մարդու գրութեան մէջ չեմ լինի:

#### 9 օգոստոսի.

Երէկ երեկոյեան մօտ մենք Նրէկրբիւկէումն էինք:

Պառաւ տիկինները քիչ տեղ հետներս եկան, բայց չըլլէժը որ անցանք, նրանք խալայն նստեցին նստարանի վրայ և մենք երկուսով առաջ գնացինք: Խնձ թւում է երկուս էլ զգում էինք, որ մեր մէջ կարեոր խօսակցութիւն պէտք է տեղի ունենայ: Ես մէկ ուզում էի Անելիային մի քանի գեղեցիկ տեղեր ցոյց տալ, ասել նրանց անունները, բայց հազիւ միայն: Նարէկի անունն ասացի. այդպէս խօսքը կտուրը գցելը և լուլը այն բանի մասին, որ քարի պէս ճնշում էր մեր սիրտը, ինձ այնքան օտարութի և անհեթեթ երևաց, որ ես լուցի: Մենք կարող էինք միացն մեր մասին խօսել կամ լուլ: Եւ մենք երկար ժամանակ գնում էինք լուռ, որ պէտք է ասած ինձ շատ ձեռնոտու էր: Այդ ժամանակ որքան կարող էի ուշքս հաւաքեցի և զսպեցի այն նեարդային յուղումը, որ տիրում է մարդուս կեանքի մէջ նշանաւոր րուպէներից առաջ, և որքան կարող էի աշխատեցի սառնասիրս լինել: Ասոնասրութիւնս դոնէ այնքան տեղն եկաւ,

որ վճռեցի խօսել սէրիս մասին և այնպէս հանդիսատ, այնպէս բնական կերպով, ինչպէս բոլորին յայտնի ու բոլորից ընդունւած միքանի մասին։ Փորձն ինձ սովորեցրել է, որ տղամարդը կամանց հետունեցած յարաբերութեանը ինչ տոն ուզենաց կը տայ։ Խսկ կնոջ վրայ ոչինչ այնպէս չի ազդում, ինչպէս խօսալու տոնը Եթէ տղամարդը իւր խոստովանութիւնը այնպէս է անում, որ կարծես թէ դրանից յետոյ պէտք է ամբողջ աշխարհը փուլ գայ, այսինքն յուղած, վախվելով ու այն համոզմունքով, թէ մի չտեսնաւած ու ըլլսւած գործ է կատարում, այն ժամանակ նոյն երկիւղն ու համոզմունքը հաղորդում են նաև կնոջը Հակառակ դէպքում լինում են և հակառակ հետեւանքներ։ — Խոստովանութիւնը կորցնում է իւր բոլոր ոյժն ու նշանակութիւնը, բայց աւելի հեշտ է ընդունւում և աւելի քիչ դիմադրութեան հանդիպում։ Ասենք ես արդէն խոստովանել եմ նրան իմ սէրս, իսկ այժմ պէտք է միայն աշխատէի այնպէս անել, որ Անելկացի հոգին չխրանի սիրոյ անունը լսելիս։ Եթէ բանն այնպէս վերջանաց, ինչպէս մինչև այժմ է վերջացել, այնժամանակ որ և է խօսակցութիւն մեր մէջ անկարելի կը դառնայ, իսկ խօսել հարկաւոր է, անհրաժեշտ է, որ գոնէ մի կերպ մեր յարաբերութիւնները պարզենք։ Այդ բոլորը ինկատի ունենալով, ասացի որքան կարողէի հանգիստ կերպով։

— Դու կարելի է քեզ հաշիւ չես տալիս, Անելկա, որքան ինձ բարկացրել ես գու քո այստեղից գնալու դիտաւորութեամբ։ Նատ լուգիսեմ, որ քո բերած բոլոր պատճաւաբանութիւնննրը այդ բանում ոչ մի գեր չեն խաղում և որ դրա գլխաւոր պատճառը ես չեմ։ Մի բան ես միայն մոռացել եմ, թէ ինչ կը լինի իմ օրը, երբ դու մօտավինես։ Այդ իսկի ինկատի չես առել։ Գիտեմ, քո գնալը սիրոս այնպէս չէր յաւացնի, ինչպէս այն միտքը, որ ես եղած-չեղած՝ քեզ համար մի և նոյն է։ Կարելի է ասես թէ իմ լաւս ուզելով կիր այդպէս անում, որ ինձ բժշկած լինես։ Զէ, թող ինձ հանգիստ ինձ այդ ձեռվ մի բժշկիր, որովհետեւ քո դեղը ինձ աւելի վնաս կը պատճառի, քան թէ կարծում ես։

Մի վայրկեան Անելկացի թշերի վրայ երևացին կարմիր բծեր։ Ակներև է խօսքերս նրա սրտի ամենազգացուն լարերին դիսան։ Զգիսեմ, ինչ կը պատասխանէր այդ բոլորին, եթէ չպատահէր մի դէպք, որ ան-

ամիսիալ կերպով խանգարեց նրա մոքի ընթացքը: Ճանապարհի մօտ բարձր խոսի միջից յանկարծ երևաց մի ապուշ, որտնցից այնքան շատ կայ Գաշոէնի շրջակացքում, ահազին դլխով, լուերով ծածկւած վզով, գաղանական հայեացքով, և մատները շարժելով սկսեց ողորմութիւն խնդրել: Նա այնպէս յանկարծ դուրս պրծաւ առաջներս, որ Անելկան վախից ճշաց: Մինչև որ նա ուշքը ժողովեց ու սկ փող փնտուեց (ինձ մօտ փող չկար), անցաւ մի քանի րոպէ: Այդ ժամանակամիջոցում իմ խօսքերի արած տպաւորութիւնը այնքան թուլացաւ, որ երբ մենք վերջապէս այդանդից հեռացանք, նա մի րոպէաշափ լռելուց յետոյ պատասխանեց ինձ արտաւմ, բայց քաղցր կերպով.

—Դու շատ անդամ՝ ես դէպի ինձ անարդար եղել, բայց այս անդամնայ պէս ոչ երբեք: Դու կարծում ես ինձ համար շատ հեշտ է այդ բոլորը տանել, որ ես սիրա չունեմ. իսկ իմ դրութիւնը ամենեին, ամենեին աւելի լաւ չե, քան թէ քոնը...

Այս խօսքի վրայ նրա ձայնը կտրւեց, իսկ իմ երակը կատաղի ոյժով սկսեց բարախել: Թւում էր թէ մի վերջին ճիգ էլ որ զորդ դնեմ—նրա բերնից խլած կը լինեմ անկեղծ խոստովանութիւնը:

—Աղաչում, պաղատառմ եմ քեզ յանուն այն ամենի, ինչ որ թանգ է քեզ համար,—գոշեցի ես,—ասա ինչումն է բանը:

—Նրանում, որ եթէ ես անբախտ եմ, թող ինձ գոնէ անարատ մնամ: Լէոն, աչքիս լոյս, աղաչում եմ քեզ, խղճա ինձ: Դու չգիտես, որքան ես անբախտ եմ: Ես քեզ համար պատրաստ եմ ամեն բան զոհել, բացի ուստւիցս: Մի պահանջիր, որ փրկութեանս այդ վերջին շիւղն էլ քեզ տամ... այդ չի կարելի, անհնար է զոհել: Ո՞հ, լէոն չան...

Եւ՝ նա ձեռքերը խաչած, դոզդողալով ու արտասւալից աչքերով նայում էր երեսիս: Զդիաեմ, եթէ այդ բոսէին նրան սեղմէի կրծքիս, գուցէ նա յետոյ ամօթից ու վշտից մեռնէր, բայց այժմ ոյժ չէր ունենայ դիմադրելու:

Բայց ես վարւեցի այնպիսի մարդու պէս, որին սէրը ստիպում է իրան զոհել,—մուսացայ ինձ և միայն նրան էի տեսնում: Եւ ես իսկոյն և եթ նրա ոսների տակ շպրաեցի թէ սէրս թէ եսականութիւնս: Այդ ինչքան ինձ համար աւելի ծանր էր նրա հետ համեմատած: Երբ սիրած նկինը պաշտպանում է սրտի խոր-

քից բղխող արաւասուքով, որ քամեռում է անկեղծ ցաւից, — նա անյալթելի է լինում: Ես բանեցի Անելվացի ձեռքը, համբուրեցի ակնածութեամբ ու հիացմամբ և ասացի.

— Կը լինի այնպէս, ինչպէս սիրոտ ուզում է, երդում եմ սիրովս, որ ճշմարիս եմ ասում:

Երկուսս էլ ուրիշ ոչինչ չկարողացանք խօսել: Ճիշտն ասած այդ բողէին ինքս իմ աշքին երկում էի համ աւելի լաւ, համ աւելի աղնիւ, քան երբ և իցէ եղել եմ: Ես ինձ զգում էի այն մարդու պէս, որ ծանր հիւանդութեան ճգնաժամը քաշելուց յետոց զգում է ս սատիկ թուլութիւն, բայց միեւնոյն ժամանակ և մեծ ուրախութիւն, որ վերաբառնում է դէպի կեանքը: Քիչ ժամանակ անցնելուց յետոց ես խօսեցի, և խօսեցի հանգիստ ու մեղմ կերպով, ոչ միայն իրրե սիրող մարդ, այլ և ինչպէս ամենամօտ բարեկամ, որ ամենից առաջ ի նկատի ունի իւր սրտին մօտ էակի բախտաւորութիւնը:

— Դու չես ուզում դնալ քեզ անծանօթ ճանապարհով, — ասացի ես, — ես էլ չնակը չեմ անի քեզ քո ճանապարհոց շեղնլու: Քո շնորհիւ ես էլ եմ փոխւել, և այն տանջանքները, որոնց միջով անցայ, վերածնել են ինձ: Քո շնորհիւ հասկացայ, որ այլ է ցանկանալլու այլ՝ սիրելլի: Ձեմ խոստանում, որ կը դադարեմ քեզ սիրելուց, որովհետեւ չեմ կարող, և հաւասարապէս խաբան կը լինէի թէ քեզ, թէ ինձ, եթէ այլպիսի խոստումն անէի: Քո մէջն է իմ ամբողջ կեանքը: Ասում եմ այս առանց ամենաչնչին յափշտակութեան, այլ իրրե մի մարդ, որ կարողանում է նայել իւր ներսը և լաւ գիտէ, թէ ինչն է ճշմարիս և ինչը՝ մոլորութիւն: Բայց ես կը սիրեմ քեզ այնպէս, ինչպէս եթէ զու մեռած լինէիր և ես սիրելիս լինէի քո հոգին: Համաձայն ես դրան, Անելկա ջան: Այդ մի անասելի տիտուր սէր է, բայց հրեշտակացին սէր է: Դու կարող ես ընդունել այդ սէրը և ինձ սիրել նոյն սիրով: Երդում եմ, որ կը սիրեմ քեզ այդ սիրով, և այդ երդումը ինձ համար նոյնքան սուրբ է, որքան սուրբ կը լինէր, եթէ ես սեղանի առաջ անէի: Ես երբէք ուրիշ կնոջ վրայ չեմ պսակւի, կապրեմ միայն քեզ համար և իմ հոգիս քոնը կը լինի: Դու էլ ինձ սիրի այնպէս, ինչպէս թէ ես մեռած լինեմ: Քեզանից աւելի ոչինչ չեմ խնդրում, բայց այդ

ինձ մի՛ մերժի, որովհետեւ զրանում ոչ մի մեղք չկայ: Եթէ կասկածում ես, կուզես խոստվանութեան ժամանակ հարցըրն: Դու հօկարդացնել ես Դանտը: Յիշնում ես, որ նա էլ պսակւած էր, սակայն սիրում էր Բէտարիչէին նոյնպիսի սիրով, ինչպիսի սէր ես եմ քեզանից պահանջում: Նա բացարձակ յացնում էր իւր սէրը, և չայլով դրան, եկեղեցին նրա պօչման համարեա սուրբ է ընդունում: Եթէ քո հոգու մէջ կայ նոյնպիսի զգացում դէպի ինձ, այն ժամանակ տուր ինձ քո ձեռքը և թող այսուհետեւ մէր մէջ թաղաւորի յաւիտենական համաձայնութիւն ու խաղաղութիւն:

Անելկան մի քիչ լուռ մնաց ու ուեց ինձ իւր ձեռքը:

—Ազգպիսի բարեկամական զգացում, —ասաց նա, —ես միշտ գործել եմ դէպի քեզ և բոլոր հոգովս ու սրաովս խոստանում եմ քեզ նոյնը:

«Բարեկամական զգացում» խօսքը սիրոս շատ վաստ ծակեց: Այդ ինձ համար շատ քիչ էր, քիչ էր և այդ բոպէի համար: Բայց ձայն չհանեցի: «Ուր» խօսքը նրան դեռ վախեցնում է, —մոտածեցի ես, — նա պէտք է սովորի դրան: Ասենք բանը էութիւնն է և ոչ անունը. շարժի մի խօսքի համար խանգարել այն համաձայնութիւնն ու բախտաւորութիւնը, որ մենք վերջապէս ձեռք բերեցինք հազար ու մի տարածայնութիւնների, դառնութիւնների ու տանջանքների միջից: Առանց այն էլ մենք երկուս շատ ենք տանջւած. երկուսիս համար էլ այնքան անհրաժեշտ է հանգստութիւնը, որ արժի նրա համար թէկուզ մի բան էլ զոհած լինել:

Այդ ստուերը անհետացաւ այն մաքի լոյսից, թէ Անելկան ինձ է պատկանում, իմ հաւատարիմ հոգեսր կինն է: Ասուած գիտէ, թէ ինչ կը տայի, որ կարողանայի նրանից ուղղակի հարցնել՝ «իմն ես արդեօք» և ստանայի նրանից դրական պատասխան: Յւ ես կը հարցնէի նրանից օրը հարիւր անգամ և երբէք չէի կշունաչ նրա պատասխաններից, բայց այդ բոպէին վախենում էի նրան խրանեցնեմ: Ես որ ամեն բան հասկանում եմ, չտէոք է հասկանայի նոյնպէս, որ կան խօսքեր, որոնք թէև արտայայտում են կատարւած և ընդունւած իրողութիւնը, բայց մեծ գժւարութեամբ են դուրս գալիս կնոջ բերանից, այն էլ այնպիսի կնոջ, ինչպէս Անելկան է: Ֆէ որ նրա բոլոր ասածը խոստվանութիւն էր, որ

նա համաձայնեց, որ մեր հոգիները պատկանեն միմեանց,—էլ ի՞նչ եմ ուզում աւելի:

Հասանք մինչև Նրէկրիւկէ ու տուն վերադառնք: Ճանապարհին մենք մեր նոր դրութեան մէջ մեզ այնպէս էինք զգում, ինչպէս մարդ զգում է իրան նոր բնակարանի մէջ, և փորձ էինք անում լնտելանալ մեր նոր դրութեանը: Այդ շէր կարելի առանց որոշ ջանքերի, որոնք որոշ չափով կաշկանդում էին մեր ազատութիւնը: Բայց ինձ այդ էլ միմիթարութիւն էր պատճառում, ինձ շարունակ թւում էր, որ այդպէս է լինում պսակից յետոյ առաջին ժամերին, երբ նորապսակները զգում են իրանց յաւիտեանս կապւած, բայց դեռ չեն ընտելացել միմեանց: Սակայն ես շատ խօսեցի Անելկայի հետ մեր երկուսիս մասին, բացատրում էի նրան, որքան սուրբ ու անարատ է այնպիսի կապակցութիւնը, ինչպէս որ մերը պէտք է լինի, աշխատում էի ներշնչել նրա մէջ հաւատ ու սրբի անդորրութիւն: Նա լսում էր ինձ պացճառ երեսով և համարեա ամեն բոպէ իւր նազելի աչքերը դարձնում էր դէպի ինձ: Եղանակի պարզութիւնը համապատասխանում էր մեր հոգիների պարզութեանը: Արեգակը արդէն մայր էր մոել, Ալպերը ըստ սովորականին շառագունել էին և նրանցից ընկած շողքը լուսաւորում էր Անելկայի երեսը:

Կուռս տեսեցի Անելկային, և մենք գնացինք միմեանց կողքից: Յանկարծ նկատեցի, որ նա քայլերը դանդաղեցնում է, կարծես վախենում է առաջ գնալ, գոյնը զցել է գաճի պէս: Այդ տեսեց մի բոպէաչափ, բայց ես սատոիկ վախեցայ ու սկսեցի հարց ու փորձ անել, թէ ի՞նչ է պատահել:

Անելկան առաջ չէր ուզում ասել, բայց երբ շատ սովիակեցի, խոստովանւեց, որ յանկարծ միտն եկաւ այն ողորմելի ապուշը և մի բոպէ հաւատացած էր, որ նա որտեղից որ է դարձեալ մի տեղից դուրս կը պրծնի:

—Ինքս էլ չգիտեմ ինչու.—ասաց նա, —բայց նա ինձ վրայ սարսափելի տպաւորութիւն գործեց... ամաչսւմ եմ խոստովանւել, որ այդքան յիմար նեարդեր ունեմ: Զեմ կարողանում մոռանալ նրան և ոչ մի կերպ չէի ցանկանայ մէկ էլ նրան պատահել:

Ես նրան հանգառացնում էի, ասում էի, որ իմ մօտ նրան ոչ

վտանգ չի կարող սպառնալ։ Նա իւր կամքին հակառակ անհանգիստ կերպով ձանապարհի այս ու այն կողմն էր նայում, բայց շուտով մեր խօսակցութիւնը ջնջեց նրա սրտից այդ զգւելի տպաւորութիւնը։ Երբ մենք մօտենում էինք ջրվէժներին, արդէն մթնել էր, բայց զարմանալի տաք երեկոյ էր։ Նարառութինգերի առաջ հրապարակի վրայ աճազին բազմութիւն լսում էր թափառաշրջիկ նւագածուհիներին Զգիտեմ ինչու, այդ լեռնային կիրճը այդ օր ինձ վրայ Խոսալիայի տպաւորութիւնն էր զործում։ Յիշեցի ինչպէս երբեմն Հոռոմում գիշերները ման էի գալիս Մոնտէ-Պինչում և երազում։ Էի այն բախտաւոր օրւայ մասին, երբ Անելկան էլ կողքիցս ման կը կաց։ Այժմ զգում էի, ինչպէս նրա կուռը յենում է իմ կռան վրայ, զգում էի նրա հոգին իմ հոգու կողքին։

Մենք ներս մտանք մեր ամարանոցի զարսպասից հանգիստ սըրտով, մեզմ ու անխռով ուրախութեամբ լի հոգով։

## 10 օգոստոսի.

**Այսօր ամբողջ օրը մտածում էի Անելկայի խօսքերի մասին,** որ նա ասաց ինձ ճանապարհին՝ Երէկբրիւկէ զնալիս։ Առանձնապէս սրտիս վրայ շատ խորը ազդեց նրա մի բացականչութիւնը, որ զուրս թռաւ նրա բերանից թէ՛ «Դու չգիտես, ես որքան անբախտ եմ։ Որքան խորը վիշտ կար այդ ազազակի մէջ, ինչպէս ակամայ խոստովանութիւն էր զգացւում, որ նա իւր մարդուն չի սիրում, չի կարող սիրել և որ վերջապէս հակառակ իւր կամքին ու զործ դրած բոլոր ջանքերին նրա սիրաը պատկանում է ինձ։ Եթէ այդ ճիշտ է, կը նշանակի նա նոյնքան անբախտ էր, որքան և եւ Ասում եմ էլք, որովհետեւ այլ ևս անբախտ չէ։ Այժմ նա կարող է ինքն իրան ասել ևս նրան հաւասարիմ կը լինեմ ու անարատ կը մնամ, իսկ մնացածը թողնել Աստծու անօրէնութեանը։

## 11 օգոստոսի.

**Մտածեցի, որ յիրաւի իրաւունք չունէի սպահանչել Անելկայից ու սպասել, որ նա ինձ համար ամեն բան զոհի։ Սուտ է, թէ սիրոյ համար զոհում են ամեն բան։ Եթէ օրինակի համար իմ ու Կրոմիցկու մէջ ընդհարում լինէր և Անելկան յանուն մեր սիրոյ ինձ-**

նից պահանջէր, որ ծնկաշոք նրանից ներողութիւն խնդրեմ; ևս այդ էի անի; Անմիտ ու ֆանտաստիկական բան է ենթադրածո, բայց դրա մասին միտք անելիս անդամ արիւնը գլուխս է խփում: Զէ, Անելկա, ճշմարիտ է ասածդ, կան բաներ, որ ոչ ոք չի կարող ու իրաւունք չունի զոհել յանուն սիրոյ:

## 12 օգոստոսի.

Այս առաւօտ գնացել էինք Վինդիշդրեօցհեօնէ: Ոտքով մինչև այնտեղ երեք քառորդ ժամնայ ճանապարհ է, այդ պատճառով ձի վարձեցի Անելկայի համար և տանում էի ձիուն սանձիցը բռնած: Գնալիս մի ձեռքս դրել էի ձիու բաշին, այնպէս որ կուռս քսում էր Անելկայի շորին: Զիու վրայ բարձրանալիս Անելկան յենւեց ուսիս վրայ և իմ մէջ մի ակնթարթում յարութիւն առաւ: Հին մարդը: Նրան իմ մէջ ոչնչացրած լինելու համար պէտք է սպանեմ մարմինս, մարդ չլինեմ, այլ միայն հոգի: Ես պարտաւորւել եմ իմ կրքերս ու խանդերս կապած պահել—և կը պահեմ, բայց յանձն չեմ առել ամենեւին չունենալ, ինչպէս չէի կարող յանձն առնել ամենեւին շունչ չքաշել: Եթէ ևս Անելկայի ձեռքի կպչելուց աւելի չցնցւէի, քան մի փայտի կտորի կպչելուց, այդ նշան կը լինէր, որ նրան չեմ սիրում, և այն ժամանակ ոչ մի պարտաւորութիւն հարկաւոր չէր լինի: Անելկային որ ասում էի, թէ նրա ազգեցութեան շնորհիւ ես վերածնել իմ, սուս չէի ուղում ասել, բայց ուարդ չորշեցի այն, ինչ որ կատարւել էր մէջս: Իրօք՝ ես միայն ինքս ինձ զավեցի: Ես հրաժարւեցի լիակատար բախտաւորութիւնից, որ զոնէ կէսը ստանամ: Ես գերադասում եմ տիրանալ Անելկային գոնէ այդ ձեռվ, քան ամենեւին չտիրանալ, և կարծում եմ, որ ով գիտէ, թէ ինչ է նշանակում սիրել կնոջ, նա հեշտ կը հասկանայ ինձ: Եթէ կրքերը, ինչպէս ասում են բանաստեղծները, կարելի է համեմատել շների հետ, ես այդ շներին կապել եմ և սովամահ կանեմ, բայց իմ ոյժից վեր է արգելել նրանց, որ չորնան ու շթափահարեն իրանց շղթաները:

Լաւ գիտեմ, թէ ինչ եմ խոստացել, և կը պահեմ խոստումս, որովհետև պարտական եմ պահելու: Անելկայի անյողդողդութիւնը իմ բարի կամ չար կամքի արտայայտութեանը ամենեւին տեղ չէ

թողնում։ Ինձ համար լաւ սահման է և իմ երկիւզը, որ քիչ տռաջ տռածն էլ յանկարծ ձեռքից լիպեն։ Այժմ մինչև անգամ չափազանցնում եմ իմ զգուշութիւնը, որ չխրանեցնեմ այն թռչունին, որ ինձ համար «հոգեկան սէր» անունն է կրում, իսկ Անելիկայի համար բարեկամական զգագում է կրում։ Յիշում եմ նրա այդ խօսքը, որ, ինչպէս փոքրիկ փշի ծակաց, սկզբում ցաւ չի պատճառում, իսկ յստոյ սկսում է մրմնջալ։ Այդ խօսքը իմ աչքին տռաջ աննշան բան էր երեսում, իսկ այժմ տեսնում եմ, որ առաջուց մտածւած և լաւ կշռած է եղել։ Խնչ տարօրինակ է կանսնց այն յատկութիւնը, որ նրանք վախենում են ամեն բան կոչել լսան իւր էութեան։ Ես հօ պարզ ասացի Անելիկային, թէ ինչ եմ խնդրում իրանից, նա նոյնպէս պարզ հասկացաւ, բայց այդ զգացումը բարեկամութիւն անուանեց, կարծես թէ այդ դէպքում պատապարւել էր ուզում թէ ինձանից, թէ իրանից և թէ Ասուածանից։

Միւս կողմից ճիշտ է և այն, որ իրականութիւնից այդ աստիճան կարւած մի զգացման ինչ անուն ասես կարելի է տալ։ Որքան վիշտ ու դառնութիւն կաց այդ մաքի մէջ։ Այդ նախազգուշութիւնը յատուկ է անպայման կերպով անարատ կանսնց և անկասկած յառաջանում է նրանց ասսուիկ ամօթխածութիւնից, բայց միենոյն ժամանակ նոյն այդ ամօթխածութիւնը թոյլ չի տալիս նրանց մեծահոգի լինեն։ Ես կարող էի դալ Անելիկայի մատու ասել։ — «ինչ ուզում է լինի, ես քեզ համար հրաժարւել եմ իմ էութեանս կէսից, իսկ դու ինձ համար ամեն խօսք չափում կշռում ես, միթզ այդ խիզմ է։ Եւ սրախ խորքում նրան այդ ասում եմ նախատական ձայնով։ Սէրը գմւար է հասկանալ առանց մեծահոգութեան, առանց ցանկութեան մի որ և է բան զոհել սիրած էակի համար։»

Այսօր Վենդիշը հեօհէի վրայ մենք խօսում էինք, ինչպէս երկու մօտ ու սրտակից մարդիկ, բայց իսկ և իսկ այդպէս կարող էին խօսել և երկու մօտ ազգականներ։ Եթէ մեր զրուանքն անէինք Նըկբրիւկիում կապած պայմանից առաջ, ես կը փորձէի Անելիկայի ձեռքերը, ոտքերը համբուրել, գէթ մի բոպէ նրան իմ գիրկն առնել, բայց այժմ գնում էի հանգիստ, աչքս նրա աչքերից չէի հեռացնում, ինչպէս ամեն մի խիստ արտայացտութիւնից վախեցող

մարդ: Մինչև անգամ աւելին կասեմ, համարեա ոչինչ չէի խօսում  
մեր հոգեկան սիրոյ մասին: Մասամբ ինձ զիտմամբ էի զարում,  
մոտածելով որ այդ ձեռվ աւելի կը հաստատեմ նրա հաւաք դէպի  
ինձ: Բայց այդպէս լուս աչքերովս ասում էի նրան. «Դու չես  
սխալի իմ վերաբերմամբ, — աւելի լաւ է ես չեմ օգտուի ինձ  
աւած բոլոր իրաւունքներից, քան կը խախտեմ մեր պայմանա-  
դրութիւննեա:

Բայց էլի մարդ իրան մի քի: Վերաւորւած է զգում, եթէ նրա  
զոհը լնդունում են նոցն սիրով ու պատրաստականութեամբ, ինչ  
սիրով ու պատրաստականութեամբ նա անում է իւր զոհը: Այդ ժա-  
մանակ մարդ ակամաց սրտի մէջ ասում է սիրելի հակին. «Մի  
թողնի որ քեզ վերազանցեն»:

Եւ ես ասում էի այդ, բայց իզուր:

Ի՞նչ գուրս կը գայ զրանից: Բացի յուսախաբութիւնից ուրիշ  
ոչինչ: Կարծում էի պայմանը կապելուց յետոց ես այդ պայմանի  
սահմաններում ազատ կը լինեմ, ինչպէս թոշուն, կը կարողանամ  
առաւօտից մինչև երեկոյ կրկնել սիրում եմ խօսքը և առաւօտից  
մինչև երեկոյ կը լսեմ նոցնը, որ ինձ վարձատրած կը լինեմ բոլոր  
տանջանքներիս ու երկար ժամանակ կրած անկեղծ նեղութիւններիս  
համար, որ կը լինեմ մի տեսակ թագաւոր իմ թագաւորութեան  
մէջ. իսկ այժմ զործերը այնպէս են դառնում, որ իմ սահմաններս  
գնալով աւելի նեղանում են, իսկ սրտիս մէջ ծաղում է կասկած,  
որ այս հարցովն է արտայացաւում» «Ի՞նչ է շահածդու:

Բայց ես աշխատում եմ հեռացնել սրտից այդ կասկածը:  
Զէ, ես էլի մի բան ձեռք եմ բերել Զեռք եմ բերել իրաւունք  
զմայել նրա բախտաւոր ու փայլուն երեսով, նրա ժպիտով, ձեռք  
եմ բերել այն, որ նրա պայման աչքերը համարձակ կարողեն իմ  
աչքերիս նայել: Եթէ մինչև այժմ նեղւածք ու անյարմարութիւն  
եմ զգում այդ նոր բնակարանիս մէջ, դրա պատճան այն է, որ  
չեմ կարողանում ինչպէս հարկն է ապրել նրա մէջ:

Ի վերջոյ առաջ ես բոլորովին անսպասան էի, և եթէ պարզ  
չեմ աեսնում իմ ձեռք բերածը, զոնէ շատ լաւ գիտեմ, որ ոչինչ  
չէի կարող կորցնել: Այդ ոչ մի ժամանակ չպէտք է մոռանամ:

## 14 օգոստոսի,

Հօրաքոյրս սկսում է խօսք զցել տուն վերազանալու մասին: Օր օրի վրայ նա Պլոշովը աւելի է կարօտում: Հարցրեցի Անելկալին, ուրամի կը լինի որ վերադառնայ: Ասաց այս... և իմ սիրոս էլ ուզեց շուտով աջառեղից գնալ: Առաջ ես միշտ տարօրինակ ու անբացատրելի յայսեր էի գնում տեղափոխութեան վրայ: Այժմ ոչ մի բանի վրայ յոց չեմ գնում, բայց այնքան քաղցր լիշողութիւններ են կապւած Պլոշովի հետ, որ ուրախութեալր նորից կը տեսնեմ նրան:

## 15 օգոստոսի

Օրերս սկսում են միատեսակ ընթանալ: Մտածում ու հանգստանում եմ: Մտածունքներս յաճախ տիսուր են՝ լինում, երբեմն և դառը, բայց հոգիս այն աստիճան տանջւած է արդէն, որ ես զւարձութիւն եմ զգում այդ թէկուզ պայմանական հանգստութիւնից: Դրա շնորհիւ այժմ զգում եմ, որքան աւելի լաւ եմ հիմա առաջւայ համեմատութեա իր: Այժմ ես ու Անելկան շատ ժամանակ ենք անցնում միասին, կարգում ենք ու խօսում ենք կարգացածի մասին: Խնչ որ ասում եմ, բոլորը ծառացում է սիրոյ որոշմանը, սիրոյ զարգացմանը, բոլորը սէրին է վերաբերում: Բայց զարմանալի բան է, նկատեցի, որ ես երբեք սիրոյ մասին ուզզակի չեմ խօսում, կանանց երկիրով՝ ամեն բանի իւր անունը տալ՝ ինձ էլ է հաղորդել: Խացատրել թէ ինչ է դրա պատճառը, ես չեմ կարող, բայց այդ բարկութիւնս բերում է, երբեմն մինչեւ անգամ սաստիկ է բերում և միենոյն ժամանակ ինձ ուրախութիւն է որատճառում, որովհետեւ՝ տեսնում եմ, որ Անելկան զո՞ն է դրանից, որ զլիսաւորն է՝ զգում եմ, որ նա սիրում է ինձ դրա համար: Մեր հողեկան կապը աւելի ամրացած լինելու համար սկսեցի նրա հետ իմ մասին խօսել: մտածում էի որ մեր պայմանից յետոյ նրանից ոչ մի գաղանիք պէտք է չունենամ: Լուսում էի միայն այնպիսի բանների մասին, որ նրա սրտի ու մոքի անարատութեան կարող էին անախորժ լինել, բայց փորձ էի անում ծանօթացնել նրան իմ ներքին գրամայի հետ, որ յառաջանում է սկեպտիկականութիւնից և կենսական որ և է նեցուկ չունենալուց: Նրան պարզ ասացի, որ

աշխարհիս մէջ ինձ համար ոչինչ չի մնացել, բացի նրա հոգուց, նկարագրեցի, ինչ են անցել զլխովս նրա մարդու գնալուց յետով, ինչ փոփոխութիւնների ու ցնցումննրի միջով է անցել սիրոս ու հոգիս Պլոշով վերադառնալուս օրից սկսած. մանաւանդ մեծ սիրով էի նկարագրում նրա համար, որ պատմութեանս ձևով նրան իսկապէս խոստովանութիւն էի անում, և այդ բոլորը մի բան էր միայն նշանակում. —քեզ սիրում եմ ու սիրել եմ միշտ աշխարհիս երեսին ամեն բանից առաւել: Նրան խաբում էր խոստովանութեան ձևը, նա լսում էր խոստովանութիւնս այնպէս, կարծես խօսքս ուրիշի մասին լինէր և ոչ իւր մասին, լսում էր յուզւած, կարեկցար և գուցէ և անդիտակցարար գւարձութիւն զշալով: Տեսնում էի, ինչպէս քանի-քանի անգամ նրա աչքերը արտասուքով լցւեցին, ինչպէս ալեկոծում էր նրա կուրծքը, ինչպէս նրա հոգու ամբողջ էութիւնը դրկաբաց ձգուում էր դէպի ինձ, կարծես ուզում էր ինձ ասել՝ շարի մօտս, դու էլ իրաւունք ունես բախտաւորութեան մի մասնիկ ունենալու: Եւ ես պատասխանում էի արտասաւալից աչքերով. «ինքս քեզ ոչինչ չեմ ասում, և յոյսս միայն քո մեծահոգութեան վրայ է»:

Խոստովանութիւններս մէկ էլ նրա համար էի անում, որ այդ մեր մէջ սովորութիւն դարձնեմ և Անելկայի մէջ այն հասկացողութիւնը հաստատեմ, որ մեր մէջ հէնց այդպէս էլ պէտք է լինի: Աւզում էի նրան սախտել, որ նա էլ որոշ չափով փոխարէնը ինձ նոյնը հասուցանի, սպասմի այդ նոյն ժամանակ իւր զլիսին եկածը ու սրտի զգացածը. բայց նպատակիս չհասայ: Փորձեցի հարց ու փորձ անել, բայց խօսքերը նրա բերնից այնպիսի զժւարութեամբ էին դուրս գալիս, որ հարց ու փորձս դադարեցրի: Անկեղծ լինելու համար նա պէտք է պարզէր, թէ ինչ էր զգում դէպի ինձ և ինչպէս էին նրա յարաբերութիւնները դէպի մարդը: Ես էլ հէնց այդ էի ուզում ասել տալ նրան, բայց այդ թոյլ չէին տալիս առաջինը ամօթխածութիւնը, երկրորդը՝ նրա հասկացողութիւնը ամուսնական պարտաւորութիւնների մասին: Այդ բոլորը շատ լաւ եմ հասկանում, բայց մի անախորժ զգացումից շեմ կորողանում ազատւել: Եմ պեսիմիզմը ինձ ասում է. «բոլոր ծախսերը միմիայն քո վրայ են ըկնում, դու տալիս ես ամեն ինչ, իսկ փոխարէնը չես ստա-

նում համարեա ոչինչ. դու ինքդ քեզ խաբում ես, թէ նրա հոգին քեզ է պատկանում, մինչդեռ այդ հոգու դռները քեզ համար փակ են մնում, ուրեմն էլ ինչի տէր ես»:

Ընդունում եմ, որ այդ ձախի արած նկատողութիւնը իրաւացի է, և յոցս միայն ապագայի վրաէ է:

## 17 օգոստոսի.

Յաճախ միտս են դալիս Սիցկեիչի այս խօսքերը՝ «աւաղ, ես միայն փրկութեան կէսը տեսաց»: Բայց եթէ այդ կէս փրկութեան մէջ չլինէին և այն պակասները, որ նրա մէջ նկատում են, սիրոս դարձեալ չէր հանդառանաց: Հանգստութիւնը հնարաւոր կը լինէր միայն այն դէպքում, երբ ես եղածից աւելի ոչինչ չուզենացի, այսինքն զադարէի սիրելուց: Գնալով աւելի և աւելի յաճախ են պատահում անզդացութեան բովէներ, երբ ինձ և ինձ կրկնում եմ, թէ նոր կախարդած շրջանի մէջ եմ ընկելի ձշմարիտ է, որ իմ անասովի տանջանքներս մի քիչ մեզմացել են: Բայց ցաւը միայն քչացել է և ոչ բոլորովին անցել: Երբ ծարաւից պապակւած արաբը անաստում ջրի տեղ բերանը քար է լեցնում, այդ չի յագեցնում նրա ծարաւը, այլ միայն խաբում է նրան: Հարց է՝ արդեօք ես էլ ինձ չեմ խաբում: Իմ մէջ դարձեալ երկու մարդ կայ՝ հանդիսաւես ու զերակատար, դարձեալ առաջինը քննադատում՝ է երկրորդին և յաճախ ծիծաղում նրա վրայ: Սկեպաիկ Պլոշովսկին, այն Պլոշովսկին, որը հաստատ ու աներկբայ կերպով չի հաւատում հոգու դոյութեանը և որը սիրահարւած է Անելիացի հոգու վրայ, —աչքիս ծիծաղելի է երեւում: Խոնչ բան են մեր յարաբերութիւնները: Երբեմն նայում եմ նրանց վրայ, իբրև լոկ իմ հիւանդոս տաք-դլխութեան արտադրութեան վրայ: Հիմա որ անկասկած նման եմ այն թռչուննեն, որ մի թել քարշ է տալիս գետնի երեսին: Ես ընդարձացրել եմ իմ էութեանս կէսը, ապրում եմ կէս կեանքով և հրամայում եմ ինձ սիրել միայն կէս սիրով: Զօւր հրաման:

Փափազելը բաժանել սէրից նոյնքան անհնար է, որքան մոտածելը բաժանել դոյութիւնից: Ես միայն իբրև մարդ կարող եմ մոտածել և իբրև մարդ սիրել: Մինչև անդամ կրօնական զգացումը, բոլոր զգացումներից ամենաիդէալականը, արտայտում է խօսքե-

ըսվ, ծնրադրութեամբ ու սրբազան առարկաները համբուրելով, իսկ ես ուզում էի, որ սէրը դէպի կինը զուրկ լինի բոլորովին արտայայտութիւնից, կտրւած լինի երկրից և երկրի վրայ զոյտութիւն ունենայ գերերկրային ձեռով:

Խնչ է սէրը—փափագ ու ձգուումն: Խնչ էի ուզում խլել սէրից—փափագ ու ձգուումն: Այդ նոյնն էր, որ զայի Անելկացի մօտ ու ասէի. որովհետեւ քեզ աշխարհի երեսին ամեն բանից աւելի եմ սիրում, խոստանում եմ, որ քեզ շեմ սիրիւ:

Այդ բշրմի մէջ մի ահագին սխալ կայ: Ես յիրաւի նմանում էի անապատի մէջ մոլորւածի, ուրեմն ինչ զարմանալի բան կայ, որ աչքիս միրաժներ են երեւում:

## 18 օգոստոսի

**Երէկ** ինձ տանջում ու մաշում էին զանազան մտքեր: Գունս չէր տանում, և որպէսզի ինձ շատ չգրգռւեմ, թողեցի պեսսիմիզմի խորքերը խորասուզւելս, սկսեցի մտածել Անելկացի մասին ու պատկերացնել նրան աչքերիս առաջ: Այդ ինձ միշտ թեթևութիւն է պատճառում: Լարւած երեակացութիւնս պատկերացնում էր Անելկացին աչքերիս առաջ բոլորովին կենդանի կերպով, այնպէս որ քիչ էր մնում հետալ խօսեմ: Յիշեցի այն պարահանդէսը, երբ առաջին անդամ տեսայ նրան մեծ աղջկայ հագուստով: Յիշողութեանս մէջ այնպէս վառ կերպով նկարւեց այդ նազելի պատկերը, որ կարծես այդ երէկ լինէր: Յիշում էի նրա մանուշակազարդ սպիտակ շորը, մերկ ուսերը, նրա թէկ փոքրիկ, բայց դարնանային առաւտոի թարմ երեսը, որ մի հատիկ էր յոնքերի համարձակ զծագրութեամբ, արտեւանունքների չափից դուրս երկարութեամբ և ազումազի առատութեամբ, որ ծածկում էր նրա թշերը: Կարծես դեռ լուս եմ նրա հարցը՝ «ինձ չես ճանաչում, Լէօն»: Այն ժամանակ ես զրեցի, որ նրա երեսը ազդում է ինձ վրայ այնպէս, ինչպէս երաժշտութիւնը, որ փոխարկւած է մարդկացին զիմագծերի: Նրա մէջ միաժամանակ կար թէ օրիորդական հրասլոցը և թէ կանացի գրաւչութիւնն: Ոկ մի ժամանակ և ոչ մի կին ինձ այլպէս սասարիկ չէր զրաւել դէպի ինքը, և պէտք էր Լատրայի պէս մի Յիրցէա, որ թոյլ տայի ձեռքիցս խլէին իմ սրտիս հաւանածին, համարեա իմ նշանածին:

Ոչ ոք աշխարհիս երեսին ինձնից լաւ չի հասկանում, որ «քո կախարդանքը ծանրանում է ինձ վրայ» խօսքերը միայն բանասեղծական ցնորք չեն, այլ և դառն իրականութիւն։ Անելկայի կախարդանքը ծանրանում է ինձ վրայ։ Ես միայն սիրահարւած չեմ նրա վրայ, միայն փափագ չեմ զգում նրան տիրանալ, այլ և աստիկ սիրում եմ նրան։ Նա աւելի քան իրականացնում է այն իդէալը, որ ևս ունեմ կանացի հրապոյրի ու գրաւչութեան մասին, նա ինձ ձգում է զէպի ինքը այնպիսի մի անբացարելի ոյժով, ինչպէս մագնիսը ձգում երկաթը։ Այլապէս չի ել կարող լինել. — Ե՞ս որ այդ նոյն Անելկան է, նա ամենեւին չի փոխւելի նոյն օրիորդական դէմքն է կանացի գրաւչութեան հետ միասին, նոյն հայեացքն է, նոյն արտեանսունքները, նոյն լօնքերը, բերանը, նոյն դեղանի իրանի։ Այժմ այդ բոլորի վրայ աւելացել է և մի նոր հրապոյր — կորցրած դրախտի հրասուրը։

Բայց ի՞նչ մեծ անդունդ կաջ մեր առաջւայ և հիմակւայ յարաբերութիւնների մէջ։ Երբ մտաբերում եմ առաջւայ Անելկային, որը սպասում էր ինչպէս փրկութեան, որ գամ իրան ասեմ՝ «իմ եղիք, — համարեա հաւատովս չի գալիս, որ այդպիսի ժամանակ երբ և իցէ եղել է։ Այդ մտածելիս զգում եւ այն, ինչ որ զգում է մասնկացած մեծասունը, որ իւր ճիշտութեան օրերում փողը աջ ու ձախ էր շղրսում, իւր առաստաձեռնութեամբ աշխարհ էր զարմացնում, իսկ այժմ ստիպւած է ողորմութեամբ ապրել։

Գիշերը, երբ մտածում էի Անելկայի մասին և հոգուս հայեացքը բեեսել էի նրա վրայ, յանկարծ միտս եկաւ, որ ես նրա կենդանագիրը չունեմ, և իսկոյն բուռն ցանկութիւն զզացի ունենալ նրա պատկերը։ Երկու ձեռքով պինդ բանեցի այդ մաքից, և նա ինձ այնքան ուրախացրեց, որ քունս անմիջապէս փախաւ։ Ես քեզ կունենամ, — ասում էի ես, — կը կարողանամ դալ քո մօտ, համբուրել քո ձեռքերը, սովերը, և զու ինձ չես հեռացնի քեզնից։ Եւ սկսեցի մտածել թէ այդ ինչպէս իրագործեմ։ Զօ չէի կարող դալ Անելկայի մօտ ու ասել. «Թոյլ առոր պատկերդ նկարեն, զինը ես կը վճարեմ, բայց հօրաքրոջս միջոցով միշտ ինչ ուզում էի, ասում էի, և կարող էի նրան սովորեցնել, որ նա ցանկութիւն յայտնի Անելկայի կենդանագիրն ունենալու։ Պլոշովում մեր գերդաստանի

կենդանագիրների մի մեծ պատկերագարան կայ, որ հօրաքրոջս  
պարծանքն է, իսկ իմ խալուսառակութիւնը (որովհետեւ կենդանա-  
գիրներից մի քանիսը խալուսառակ բան են), —և հօրաքրոյս ամեն  
կերպ աշխատում է պատկերագարանը լրացնել: Ինկատի ունենալով,  
որ նա Անելիային սաստիկ սիրում է, հաւատացած էի, որ նա կը  
հիանայ, հէնց որ խօսք բաց անեմ Անելիայի պատկերի մասին:  
Գործի յաջողութեան համար բաւական էր մի հինգ րոպէ հետը  
խօսէի: Դրանում ամեննեին կասկած չունէի, և մտածում էի միայն,  
թէ կենդանագրի նկարելը ումը պատուիրենք: Ափառս, որ, ինչ անում  
եմ՝ զաւաւ տիկինները չեն համոզում Պարիզ դնալ, ուր ուզածիս  
պէս կարող էի ընտրութիւն անել Բոննատի ճիշտ ու օբյեկտիւ  
նկարելու, կարողիւս Դիւրանի վրձնինի համարձակութեան և նատ-  
լէնի գողարիկութեան մէջ: Աչքերս խփած երեւակայում էի, ինչ-  
պէս նրանցից իւրաքանչիւրը այդ գործը գլուխ կը բերէր, բայց  
ինչ օդուտ մոտածել այն բանի մասին, որ չի կարելի իրազործել:  
Գուշակում էի, որ հօրաքրոյս կը ցանկանայ Անելիայի պատկերը  
մի լեհացի նկարի: Վնաս չունի, ոչինչ չունեմ դրա դէմ:  
Վարշաւացի ու Կրակովի պատկերահանդէններում մի քանի նկար-  
ներ տեսաց, որոնք ոչնչով յետ չէին մնայ արտասահմանեան նկար-  
ներից: Վախենում էի միայն որ գործը շատ շձգձգւի: Բնաւորու-  
թեանս մէջը մի իսկը կանացի յատկութիւն կայ.—ինչ որ այսօր  
ուզում եմ, անպատճառ պէտք է վաղը կատարեն: Եւ որովհետեւ  
մենք Գերմանիայումն էինք, Միւնիէնին ու Վիէննային մօտ, մըտ-  
քիս մէջ սկսեցի ընտրութիւն անել գերմանացի նկարիչների մէջ,  
և վերջը կանգ առայ երկու անւան լրայ՝ Լեմբախի ու Անջէլիի:  
Ես տեսել եմ Լեմբախի հիանալի կենդանագիրները (ասենք միմիայն  
տղամարդկանց), բայց իմ ջիգը բերում է նրա անձնապատճենու-  
թիւնն ու թեթևակի նկարելու եղանակը, որը ես, իբրև Փրան-  
սիական նկարչութեան սիրահար, միայն վրանսիացիներին եմ թոց  
տալիս: Անջէլիի նկարած կանանց դէմքերը ինձ նոյնպէս լիովին  
բաւականութիւն չէին տալիս, բայց և այնպէս չի կարելի շխոս-  
տովանել, որ նա շատ քնքոյց վրձնն ունի, որ Անելիայի պատկերը  
նկարելու համար միանգամայն անհրաժեշտ է: Մէկ էլ Լեմբախի հա-  
մար պէտք է ճանապարհներս շեղէինք, իսկ Անջէլին մեր ճանա-

պարհին է, —մի հանգամանք, որի ցիշնը ամօթէ այն մարդու համար, որ չի ուզում վիլիսուէր անունը ժառանգել: Բայց այդ ժամանակը ինձ համար նշանակութիւն ունէր: «Մեռածները արագ են զնում», —ասում է բանատեղծը, բայց սիրահարւածները աւելի արագ են զնում: Ի վերջոյ այդ էլ որ չմնէր՝ ես էլի Անջէլին կրնորէի, այդ պատճառով հաստատ վճռեցի, որ նա նկարի Անելիայի պատկերը պարահանդէսի հաղուստով, բայց վճռեցի Անելիային հաղցնել տալ նրա մանուշակազարդ սպասակ շորբ: Ուզում եմ նրան նայած ժամանակ մոլորւեմ ու կարծեմ, թէ դա իմ առաջւայ Անելիան է: Թող ինձ ոչ մի բան չէիշեցնի սպանի կրոմիցկային: Մէկ էլ այդ հագուստը ինձ համար թանկ է իրրե ցիշողութիւն:

Համբերութիւնս չէր տալիս մինչև առաւօտ սպասեմ, —այնպէս սիրոս ուզում էր ժամ առաջ դործի ձեռնարկել: Սակայն առաջաց ծրադիրս փոխեցի Մտածեցի, որ եթէ նկարելու սպասերը հօրաքոյրս տայ, նա անպատճառ պէտք է պնդի, որ լեռնային նկարի: Այդ պատճառով որոշեցի Անելիայի սպասերը ընծայեմ հօրաքրոջս նրա տօնի օրը, որ հոկտեմբերի վերջերին է ընկնում: Ացպէս որ լինի, Անելիան էլ գէմ չի լինի: Պարզ բան է մի օրինակ էլ ինձ համար կը սպասեիրեմ:

Համարեա ամբողջ գիշերը քունս չի տարել, բայց հնայելով դրան, այդ գիշերը ամենալաւ գիշերներից մէկն էր ինձ համար, որովհետեւ ամբողջ ժամանակս անց եմ կացրել այդ տեսակ ծրադիրներ կազմելով: Քունս տարաւ միայն առաւտաեան դէմ ժամը հնդին, բայց ութին արդէն ուպէի վրայ էի: Գնացի Նրաունքին գէրի մօտ, այնուեղից հեռագրով հարցրեցի Կիւնսոլէրհառւզի գրասենեակից՝ Վիէննայումն է Անջէլին թէ ոչ, յետոյ վերադաշտուն, տեսայ բոլորին թէց խմելիս և ուզզակի ձեռնարկեցի դործին:

—Անելիա, —ասացի ես, —մեղքս պէտք է քեզ խոսանվանեմ. այս գիշեր քնելու փոխարէն քո վիճակն էի որոշում, և այժմ խնդրում եմ քեզ, հաւսնութիւն տաս իմ վճիռներին:

Անելիան վախեցած նայեց ինձ: Երեխ մտածեց թէ խելքս կորցրել եմ կամ թէ դժւածի պէս ուզում եմ ամեն բան խոսանվանել սպառաւ տիկինների ներկայութեամբ, բայց իմ երեսը հանդիսաւ էր, համարեա անտարբեր, և նա հարցրեց.

— Ե՞նչ ես վճռել իմ մասին:

Դարձայ հօրաքրոջս:

— Ես ուզում էի մի սիւրպրիզ անել, բայց տեսնում եմ, որ չեմ կարող ծածուկ պահել, այդ պատճառով ձեզ ուղիղը կասեմ, ինչ ընծայ եմ ուզում պատրաստել ձեր տօնի համար:

Եւ ես ամեն բան մանրամասն պատմեցի: Աւելի լաւ ընծայ հօրաքրոջս համար չեի կարող մտածել (իմ կենսագիրը, և շատ լաւը, նա արդէն ունէր), և նա անշափ շնորհակալ եղաւ ինձնից: Տեսայ, որ Անելիկան էլ ուրախացաւ, իսկ իմ ուզածն էլ հենց այդ էր: Խսկոյն սկսեցինք խորհել, թէ երբ և ով նկարի պատկերը, Անելիկան ինչ շոր հագնի, որ լաւ լինի և այլն: Կանաչք սաստիկ հետաքրքրուում են այդ տեսակ բաներով: Բոլոր հարցերի պատասխանը պատրաստ ունէի. բացի այդ տեսնում էի, որ կենդանագրի պատրւակով կարող էի մի ուրիշ բան էլ ստանալ:

— Այդ քիչ ժամանակ կը լինի, — ասացի ես: Հեռագիրը Անջելիի մասին արդէն խփւած է, ես չեմ կարծում, որ մեր Պլոշով վերադառնալը դրա պատճառով շատ ուշանայ: Բաւական կը լինի, որ Անելիկան չորս կամ հինգ անգամ գնայ նկարի մօտ, և որովհետեւ մենք առանց այն էլ մի քանի օր պէտք է մնանք Վիեննայում բժիշկ Նուտնադելի հետ խորհրդակցելու համար, ուրեմն այդ ժամանակ համ մէկը կարելի է անել, համ միւսը Նորը յետոյ էլ կարելի է օրինակին նացելով նկարել, իսկ երեսի համար հինգ սէանսը բաւական կը լինի: Պէտք է միայն առաջուց ուղարկել Անելիկացի լուսանկարը, օրինակ Ցելինա մօրաքրոջ մօտ եղածը, և մազերից մի փունջ: Մազերը խնդրում եմ, Անելիկայ, խսկոյն տաս: Մինչեւ մեր գտալը Անջելին լնդհանուր ուրաւգիծը կազմած կը լինի, դոյները քսած, կը մնայ միայն վերջացնելը:

Այդ բոլորը կարող էր և այնպէս լինել: ինչպէս ասում էի, բայց մազերի փունջը խնդրելիս գիտէի, որ իմ խօսակիցներից ոչ մէկը լաւ հասկացողութիւն չունի կենդանագիրներ նկարելու մասին: Այդ փունջը խնդրում էի ինձ համար և ոչ Անջելիի համար, որին նրա մազերը հարկաւոր կը գալիք միայն այն գէպքում, եթէ, նա կենդանագիրը նկարելիս լինէր լուսանկարից, որ նա յանձն չէր առնի անել: Բայց ես գործը այնպէս նկարագրեցի, որ կարելի էր կար-

ծել, թէ միայն այդ վիճիցն է կախւած գործի յաջողելը կամ չլաջողելը:

Նախաձաշից երկու ժամ յետոյ ստացայ հեռազրիս պատասխանը. Անջէլին Վիեննայումն է, ուր վերցնում է ն. իշխանուհու կենդանադիրը: Խոկոյն նրան նամակ դրեցի, դրեցի նամակի մէջ պանի Ցելինալից ստացած լուսանկարը, յետոյ տեսնելով, որ Անելկան պարտէզումն է, գնացի նրա մօտ:

—Մազերդ պատրաստ է, —հարցրեցի ես: —Նամակը ժամը երկուսին պէտք է ուղարկեմ:

Նա ներս վազեց և մի բովէից յետոյ վերապարձաւ մազերի փունջը ձեռքին: Մազերն առնելիս ձեռքս մի քիչ գողաց, բայց ես նայում էի ուղիղ նրա աչքերին ու հայեացքովս հարցնում:

—Միթէ դլիս չես լնկնում, որ այդ մազերը ինձ համար եմ ուղում, և իմ բոլոր ունեցածի մէջ նրանք ամենաթանկագին բանը չը լինին:

Անելկան ոչինչ չխօսեց, բայց արտեանունքը վար թողեց և կարմեց այնպէս, ինչպէս կարմրում է աղջիկը առաջին անգամ սիրոյ խոստովանութիւնը լսելիս: Նա զլսի լնկաւ... Այս, միայն մի անգամ նրա շրթունքը համբուրելու. համար արժի ամբողջ կեանքը զոհել, իմ սերս դէտի նա երրեմն այն աստիճան սաստկանում է, որ ինձ կսկիծ է ողատճառում: Այժմ նրա ֆիզիքական էութեան մի մասն էլ կայ ինձ մօտ: Խորամանկութեամբ հասայ նպասակիս: Ես, սկեպտիկս, որ ամեն բուք քննում ու տեսնում եմ ինձ իմ հինգ մատիս պէս, խորամանկութիւն եմ բանացնում, այնպէս եմ վար-ւում ու զդում, ինչպէս Գէօթէի Զիրէլը:

Բայց ինձ ու ինձ ասում եմ. ամենավառը՝ ես սենտիմենտալ ու ծիծաղելի եմ: Ով գիտի, արդեօք հարիւր անգամ աւելի յիմար, ծիծաղելի ու ողորմելի չէ իմ մէջ այն միւս, ոչ-սենտիմենտալ մարդը, որը ամեն բան քննում ու գիտակցութեան է վերածում: Քննել՝ միւսնոյն է թէ ծաղիկ վետրել, Գննադատութիւնը փչացնում է կեանքի գեղեցկութիւնը, հետեւապէս և բախտաւորութիւնը, այսինքն այն միակ բանը, որ իսկապէս մի գին ունի:

Պանի Յելինայի բժշկութիւնը վերջացել է, բայց մենք մի քանի շաբաթ սպասեցինք, մինչև որ դաշտավայրում տօթերն անցնեն, և այդ ժամանակ եղանակը փոխաց դէպի վարու: Այժմ դարձեալ սպասում ենք եղանակի լաւանալուն, որ իսկոյն ճանապարհ ընկնենք Վիեննաւ: Ահա երեք օր է արդէն, որ այսուեղ եղիպտական խաւար է տիրում: Ամպերը, որ սրանից մի շաբաթ առաջ կուտակում էին լեռների գագաթներին ու նրանց ձիւնով ծածկում, ցած սողացին իրանց բարձրաբերձ ապաստաններից, իջան Գաշտէնի վրայ և իրանց թանձրախիտ քօղով ծածկեցին ամբողջ հովիտը: Այսպիսի խաւարում ենք ապրում, որ կէսօրին անկարելի է լինում մեր ամարանոցից մինչև Շարառւթինգերը տանող ճանապարհը գլուխնել: Ամեն բան՝ տուն, ծառ, սար ու ջրվէժ կարծես շղարշով ծածկւած լինի: Իոլոր իրերի եզրագծերը ձուլւել ու կորել են միապաղադ թանձր ու սպիտակասուն մշուշի մէջ, որ քարի պէս ճնշում է ամեն բան, մինչև անգամ մարդու հոգին: Ժամը երկուսին կէսօրից յետոյ ճրագ ենք վառում: Իմ տիկինները ամեն բան կապել պատրաստել են: Մենք եղանակին չէինք նայի, ճանապարհ կընկնէինք, եթէ լեռնալին գետակները բարձրացած ու Հօֆդաշտէնից դուրս ճանապարհը փացրած չլինէին: Պանի Յելինայի հին դլացաւը էլի նորոգւել է. հօրաքոյը ծերունի Խւասովվակուց նամակ է սոտցել, որ շոքից հացերը փացել են, այդ պատճառով նա քայլը մեծ-մեծ զցելով ման է զալիս ճաշարանում և էլ բան չի թողնում, որ Խւասովվակուն չասի: Անելիան այսօր առաւօտւանից կարծես հիւանդ լինի: Նա խոստովանւեց, որ գիշերը երազում տեսել է այն ասպոշին, որը մեզ պատահեց Շրէկրիւկէի ճանապարհին և նրան սաստիկ վախեցրեց: Զարմանալի բան է, թէ ինչ տպառութիւն է թողել նրա վրայ այդ ողորմելի արարածը: Աշխատում էի քաջալերել նրան ուրախ խօսակցութեամբ, որ ինձ բաւական յաջողեց, որովհետեւ մեր պայմանադրութեան օրից սկսած Անելիան անհամեմատ աւելի հանգիստ, ուրախ ու բախտաւոր է:

Այդ որ տեսնում եմ քաջութիւն չեմ ունենում անգամ արտնջալու, թէպէտե յաճախ մոքովս անցնում է, որ մեր կապակցութիւնը իսկապէս ոչ մի կապակցութիւն չէ: Պայման կապելիս լաւ-

գիտէի թէ ինչ է իմ ուզածը և ինչ ձե կընդունեն մեր զգացում՝ ները, իսկ այժմ գնալով ամեն ձեւ կորչում է, անըմբոնելի ու անորոշ է դառնում, կարծես նա էլ ծածկւած լինի այն մշուշով, որ ծածկել է ամբողջ Գաշակյանը։ Ես միշտ զգում եմ, որ Անելիան չի ընդունում իմ իրաւոնքները և չեմ համարձակում նրանց մասին յիշեցնել։ Կարելի է նրա համար չեմ համարձակում, որ ամեն կռիւ, մանաւանդ սիրելի էակի համար մղած կռիւը, մարդու յոգնեցնում է, իսկ ես ամբողջ կէս տարի է, որ մղում եմ ալդ կռիւը, ոնչից ոչինչ չեմ շահել, միայն այն աստիճան ուժասպառ եմ եղել որ այժմ ինչ տեսակ հանդիսան էլ որ լինի, ես աւելի կը գերազասեմ, քան առաջւայ ապարդիւն ջանքերը։

Սակայն կարելի է ուրիշ պատճառ էլ կայ։ Եթէ մի կողմից իրերի դրութիւնը չի համապատասխանում իմ ասածին, միւս կողմից նա մօտեցնում է ինձ Անելիացին։ Նրան թւում է թէ ես իրան այժմ աւելի բարձր սիրով եմ սիրում... և ահա զրա համար նա ինձ աւելի է զնահատում (չեմ համարձակում ասել սիրում)։ Թէ պէտք արտաքին ոչ մի նշան չկայ, բայց զգում եմ, որ այդպէս պէտք է լինի։ Այդ ինձ ոչ է տալիս և ես ինձ ու ինձ ասում եմ։ — Նրա զգացմունքը գնալով աճում է, ուրեմն մտքիդ վրայ հաստատ կաց, ոսդ պինդ դիմ, և կարելի է մի ժամանակ դայ, երբ նրա զգացմունքը աւելի զօրեղ լինի, քան դիմադրութեան ոչըլք։

Առ հասարակ մարդիկ և մասնաւորապէս կանաչք կարծում են, թէ այսպէս անւանւած պլատոնական սէրը մի առանձին, շատ հազարիւտ ու վերին աստիճանի բարձր սէր է։ Այդ միայն հասկացողութիւնների շփոթութիւն է։ Կարող են լինել պլատոնական յարաբերութիւններ, բայց պլատոնական սէրը նոյնքան անմիտ բան է, որքան օրինակ անլոց լոցմը։ Մինչև անդամ դէպի մեռածները զգացած սէրը բազկացած է լինում նրանց թէ հոգու և թէ մարմնի կարօտից։ Կենդանի մարդկանց մէջ պլատոնական յարաբերութիւնները հնարաւոր են միայն այն ժամանակ, երբ նրանք բոլորովին հրաժարում են իրանց մարդկացին էութիւնից։ Սուտ չէի ասում, երբ ասում էի Անելիացին։ — Ես քեզ այնպէս կը սիրեմ, ինչպէս եթէ դու մեռած լինէիր։ Բայց հրաժարւել չի նշանակում չուալ։ Զնայելով այնքան յուսախաբութիւններիս, այնքան փորձերիս,

որ ամեն փորձ զուր է, սրտիս խորքում դարձեալ տածել ու տածում եմ մի յայս, որ մեր այժմեան յարաբերութիւնները միայն մի պադար են մեր սիրոյ ճանապարհի վրայ: Օրը հարիւր անդամ կարող եմ ինձ ու ինձ կրկնել՝ առլորութիւն, մօլորութիւն, — բայց յուսալուս չեմ ազատուի այնքան, մինչև որ ազատւած չլինեմ իմ ձգութեալից: Այդ երկու բաները միմեանցից անբաժան են: Ես հաձայնութիւն տւեցի այս յարաբերութիւններին, որովհետեւ ուրիշ ճար չունեի, որովհետեւ գերազատում էի այդ տեսակ յարաբերութիւնները լինեն, քան ոչ մի յարաբերութիւն չլինի, բայց չնայելով իմ բոլոր անկեղծութեանը, համարեա ակամայ այդ յարաբերութիւնները համարում եմ իմ կողմից մի տեսակ գերակատարութիւն, մի տեսակ դիւանագիտութիւն, որի նպատակն է ձեռք բիրել լիակատար՝ և ոչ կիսատ-պրատ բախտաւորութիւն:

Բայց մի բան որ ինձ զարմացնում է ու բարկութիւնս շարժում, որ մի կերպ հասկանալ չեմ կարողանում, — այդ այն է, որ ես այդ բանում էլ յաղթւած եմ: Իմ յաղթութիւնները թագնւած են ապագայի մշուշի մէջ (և այն էլ նման են հեռաւոր փարոսի լոյսի և կամ միրաժի), իսկ այժմ, չնայելով իմ բոլոր ճարալիկութեան, կեանքի, մարդկացին զգացութեալիք ու նրանց գիւղորմատիացի համութեան, յաղթւած եմ մի էակից, որ ինձնից անհամեմատ աւելի քիչ է փորձւած, խելքով աւելի ստոր է, ինձ պէս ամեն մի քայլ չի հաշւում ու աւելի պակաս հմուտ է կեանքի տակտիկացին: Թէ ես յաղթւած եմ, դրանում խօսք չի կարող լինել: Ի՞նչ են մեր այժմեան յարաբերութիւնները: Երկու միմեանց մօտ ազգականների յարաբերութիւն, ուրեմն այն, ինչ ուղում էր նա և ինչ էի ուղում ես: Առաջ ես լողում էի մրրկալից ծովում, շուտ-շուտ նաւարեկութեան էի ենթարկում, բայց գոնէ իմ նաւակը ես ինքս էի կառավարում, մենք աւելի հանգիստ ու հաւասար ենք լողում, միայն զգում եմ, որ գնում ենք այնտեղ, ուր որ չեմ ցանկանում գնանք: Հիմա եմ՝ հասկանում, թէ ինչու նա, հէնց որ Դանարի ու Բէատրիչէի սիրոց անուն տւեյի, երկու ձեռքը մեկնեց: — նրա համար, որ ինձ ուզած տեղը տանի: Միթէ ամեն բան ինձնից աւելի խոր ու աւելի լաւ է կարողանում հաշւել:

Զէ, ինձ յայտնի չէ մի ուրիշ էակ, որ աւելի քիչ ընդունակ

լինի այդպիսի հաշիւներ անելու, կը նշանակի այդ սկի խելքի մօտ  
բան չէ, բայց միևնոցն ժամանակ չեմ կարողանում ազատել մի  
մոքից, որ շատ մօտ է միստիկականութեան.—ինձ թւում է, որ  
մէկը նրա տեղ ամեն բան չափում կշռում է։ Ինձ շրջապատող ամեն  
բան նոյնոգէս մի տեսակ տարօրինակ է։ Տարօրինակ է և այն, որ  
թողլ եմ աալիս ինձ սահմանափակեն, որ ինքս եմ հնարել այն  
դրութիւնը, որ այդքան հակառակ է իմ բնաւորութեանը, իմ  
հայեացքներին, իմ ամենաջերմ ձգտումներին։ Եթէ մինչև Անեկա-  
յի հետ ծանօթանալս մէկն ինձ ասէր, որ մի ժամանակ այդպիսի  
մտքեր են գալու գլուխս, ես այդ ասողին խելագար կը համարէի և  
ամբողջ ամիս կը ծիծաղէի թէ այդ մարգարէի և թէ ինձ վրայ։  
Հիմա էլ ծիծաղս գալիս է ու ինքս իմ աչքին ծիծաղելի եմ երե-  
ւում։ Սակայն կարիքը ստիպեց...

(Վերջը լաջորդ համարում)